

ՄԱՆՐ ԳԻՏԵԼԻՔ

ՄԱՅՐԱԿԱՆ ԴԱՍ

Հ. Ի՞նչ է Աստուած .

Պ. Աստուած է ամենակարող էակ մը , որ զմեզ , և երկինքն ու երկիրս ստեղծեր է , ու ամեն բան անով եղեր է :

Հ. Ուսկից է Աստուած .

Պ. Աստուած ՚ի յաւիտենից է , որ ըսել է թէ ոչ սկիզբն ունեցեր է և ոչ ալ վերջ պիտի ունենայ . միշտ կար և միշտ ալ պիտի ըլլայ :

Հ. Հապա աս երկինքս ու երկիրը ինչպէս եղեր են .

Պ. Առաջ Աստուածմէ զատ բան մը չկար , երբ որ Աստուած ուղեց՝ ըսաւ որ ըլլան , ու մէկէն եղան անոնք :

Հ. Ի՞նչ բանէ եղան ասոնք .

Պ. Ոչնչէ . վասն զի բան մը չկար ուսկից առաջ դային . միայն Աստուածոյ խօսքովը եղան :

Հ. Ո՞չչափ ատենուան մէջ Աստուած ստեղեց զասոնք .

Պ. Վեց օրուան մէջ :

ԱՐՁԱՆԱԳԻՐ ՅԱՐԱՑՆ ԳԵՂԵՑԻԿ

Ըսրուու առփից վրիժահան՝ յովիտս հայոց սիրասուն

Վարդ ՚ի շուշանս փթթեցոյց արի Արայն գեղեցիկ :

ԲԱՆԱՍՏՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

Ե-ր-պայի ու Ա-ր-բ-ի-այի գրադաւոյ համառու վիճակ-ի-գրու-ի-ի-ւ-է :

Երրորդաւ այն հասարակաց գրատունները , որոնց մէջ 10,000 հատորէն աւելի գիլք կայ , 383 համ են . ասոնցմէ 107ը գաղղիա է , 41ը Աւարիոյ տէրութեան տակ , 30ը Պրուշի մէջ , 28ը Մեծն թրիտանիա , Խոշանտա ու Մալդա , 17ը Սպանիա , 15ը Հառվանյ տէրութեան մէջ , 14ը Պելճիա , 13ը Զուիցերի , 12ը Ռուսաստան , 12ը Պաւիերա , 9ը Թուքանա , 9ը Սարտենիա , 8ը Հուէտա , 7ը Նախովիլա , 7ը Փորդուկալ , 5ը Հումանա , 5ը Տանիմարգա , 5ը Սաբոնիա , 4ը Պատի մէծ դքսութեան մէջ , 4ը Հէսի մէծ դքսութեան մէջ . 3ը Վիրթէմպէրի , 3 ալ Անովերի տէրութեան մէջ , ուրիշ 26 ալ Գերմանիոյ մնացած մանր տէրութիւններուն մէջ են :

Եւրոպայի մէջ ամենէն Ճոխ գրատունը Փարիզու ազգային գրատունն է , որուն մէջ դրեթէ 900,000 հատոր սպած գիրք կայ և 80,000 ալ ձեռագիր . իսկ մանր գրուածքներուն թիւը չկայ : Ասոր ետևէն իրենց Ճոխութեանը կողմանէ կար .

դաւ կուգան Միւնիքի , Պէռլինի , Փելթրապուրկի , Քոփէնհավի ու Լոնտրայի գրատունները : — Հասարակաց գրատուններուն մէջ ամենէն հիներն են Վեննայի գրատունը (1440) , Վենետիկի սրբոյն Մարկոսի գրատունը (1468) , Ֆրանքֆորթի գրատունը (1484) , Համազուրկի գրատունը (1529) , Աթրազուրկինը (1531) , Ավսպուրկինը (1537) , Պէռլայինն ու Ճինեւրայինը (1551) , Պալմինը (1564) : Փարիզու ազգային գրատունը 1595ին կանգնեցաւ և 1737ին հասարակաց եղաւ : Ասոր մէջ 1790ին 200,000 հատոր գիրք կար , խուլ վութեան ատեն 400,000 հատոր ալ վրան աւելցաւ : — Այս գրատուններուն վլայ պէտք է աւելցնենք նաև համալսարաններու գրատուններն ալ , որոնց մէջ ամենէն հինը թուրինին (1436) ու Քէյմպրիչին (1484) է , և ամենէն Ճոխը Կէօմինկէնին 360,000 հատոր , Պրէզլաւին 250,000 հատոր , Օքսֆորթին 218,000 հատոր , Թուրպինիային 200,000 ու Միւնիքին 200,000 է :

Ասոնց մէջ ամենէն անուանին է Վենետիկի տէրութեան դիւնանը , որուն գրուածները հատոր կազմելով 2 միլիոնէն աւելի կըլլայ :

Եւրոպայի բոլոր գրատունց մէջ եղած գրոց գումարը , գուրս ճգելով այն գրատունները որ 10,000 հատորէն պակաս ունին , ամէնը մէկաեղ գրեթէ 20,012,738 հատոր կըլլայ :

Գանք հիմայ Ամերիկայի գրատուններուն : Յայտնի է որ ասոնց մէջէն ամենէն Ճոխը Միւացեալ նահանգներունը պիտի ըլլայ , ան ալ Եւրոպայիններուն քովբան չէ . բայց ՚ի վերայ այսր ամենայնի այս վերջի տարիններս այն տեղուանքի գրատուններն ալ կամաց կամաց հարստանալու վրայ են , և գրքի սերը ամէն վիճակի ժողովրդեան մէջ ալ օրէ օր տարածուելու վրայ է : Այս կողմի գրատուններուն մէջ ամենէն Ճոխը Փիլադելֆիայինն է , որուն մէջ 55,000 հատոր կայ . ետքէն Պութընինի , 35,000 հատոր . Նոր Եուրինը , 30,000 · Ռուսինկթընինը , 28,000 հատոր , և ՃէօրՃէթառնինի կամ Գէորգիա քաղաքինը , 25,000 հատոր : Իսկ Մասաչուսէթս երկրին Հարվարտ քաղաքին համալսարանին մէջ 68,500 հատոր կայ :

ՀԱՆԵԼՈՒԿ

Կաթը ու չքկայր , չքկայր ու կայր ,
Ծընաւ զամենքն անհայր անմայր ,
Ինքն էր մեռեալ նախ քան զաշնարհ ,
Նա ոչ ապրած է ոչ մեռեալ :

ԱՊՐԻԼԻ ՀԱՆԵԼՈՒԿՆ ԷՐ ԿԵՍ :